ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արևուտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Արևուտ, +37494979724, arevut10@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ԱՊՐԻԼԻ 2024թվականի N 5-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի ԹԻՎ 2-ՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Արագածոտնի մարզի Արևուտ համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ է

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արևուտ համայնքի ավագանու 2024 թվականի ապրիլի 15-ի թիվ 2-րդ նիստի օրակարգը.

1.Արևուտ համայնքի ղեկավարի հաղորդումը 2024 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարողականի մասին:

2.Արևուտ համայնքի ավագանու 17-ը մարտի 2022 թվականի <<սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին>>թիվ 17 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

3.Արևուտ համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:

4.Արևուտ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայրերը վարձակալությամբ տրամադրելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼՈՅԱՆ ԹԵՆԳԻԶ

ԱԼՈՅԱՆ ՀԱՍԱՆ

ԲԱՔՈՅԱՆ ԶԱԴԱ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՕՍԵՅԱՆ ՏԻՏԱԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՕՍԵՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արևուտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Արևուտ, +37494979724, arevut10@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ԱՊՐԻԼԻ 2024թվականի N 6-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և <<Բյուջետային համակարգի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի պահանջներով.

ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ է

Ընդունել ի գիտություն Արևուտ համայնքի ղեկավարի 2024 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարողականի վերաբերյալ հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼՈՅԱՆ ԹԵՆԳԻԶ

ԱԼՈՅԱՆ ՀԱՍԱՆ

ԲԱՔՈՅԱՆ ԶԱԴԱ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՕՍԵՅԱՆ ՏԻՏԱԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՕՍԵՅԱՆ

Հավելված
Արևուտ
համայնքի ավագանու
15 ապրիլի 2024թ.
թիվ 6-Ա որոշման

Արագածոտնի մարզի Արևուտ համայնքի 2024 թ-ի 1-ին եռամսյակի բյուջեի մուտքերը

h/h	Մուտքերի տեսակները	պլանավորված մուտքեր	փաստացի մուտքեր
1	Հողի հարկ	300.0	0
2	Գույքահարկ փոխադր	1867.4	415.0
3	Դոտացիա	49865.6	12488.4
4	Այլ եկամուտներ	1800.0	345.5
5	Անշարժ գույքի հարկ	5185.3	124.9
6	Հողի վարձավճար	1500.0	687.0
7	Այլ գույքի վարձակալություն	0	150.0
8	Տեղական տուրքեր	0	50.0
9	Նպատակ սուբվենցիա	22598.2	0

Ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման

h/h	Ծաղսերի տեսակները	պլանավորված ծախսեր	փաստացի ծախսեր
1	Աշխատավարձ	42530.0	5862.6
2	Ապրանքների և ծառայությունների ձեռք բերում	11206.0	2080.5
3	Այլ ծախսեր պահուստային միջոցներ	6288.0	0
4	Նպաստներ	700.0	80.0
4	Պարտադիր վճարներ	100.0	36.0
5	Կապիտալ ծախսեր	27794.0	0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ՕՍԵՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արևուտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Արևուտ, +37494979724, arevut10@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ԱՊՐԻԼԻ 2024թվականի N 7

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 17-Ի <<ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> ԹԻՎ 17 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավակ ակտերի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Արևուտ համայնքի ավագանու 17-ը մարտի 2022 թվականի <<սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին>>թիվ 17 որոշման հավելվածի 8-րդ կետի <<Հիվանդության կամ բուժման կարիք ունեցող ընտանիքներին>> դրամական չափը 30000/երեսուն հազար/ ՀՀ դրամի փոխարեն կարդալ 50000/հիսուն հազար/ ՀՀ դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼՈՅԱՆ ԹԵՆԳԻԶ

ԱԼՈՅԱՆ ՀԱՍԱՆ

ԲԱՔՈՅԱՆ ԶԱԴԱ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՕՍԵՅԱՆ ՏԻՏԱԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՕՍԵՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արևուտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Արևուտ, +37494979724, arevut10@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ԱՊՐԻԼԻ 2024թվականի N 8-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով,<<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1.3-րդ և 1.8-րդ կետերով և հիմք ընդունելով Արևուտ համայնքի ղեկավարի առաջարկությունը .

ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արևուտ համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼՈՅԱՆ ԹԵՆԳԻԶ

ԱԼՈՅԱՆ ՀԱՍԱՆ

ԲԱՔՈՅԱՆ ԶԱԴԱ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՕՍԵՅԱՆ ՏԻՏԱԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՕՍԵՅԱՆ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ 2025-2027ԹԹ

Հավելված 1

Արագածոտն մարզի Արևուտ համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի եկամուտները և ծախսային քաղաքականությունը շարադրող մասեր

Բովանդակություն

1. Ներածություն----------3
2. Զարգացման հիմնական ուղղությունները և սկզբունքները----------4
3. Արևուտ համայնքի 2025-2027թթ. կանխատեսվող եկամուտները----------6
4. Եկամուտների վերծանումը ըստ առանձին տեսակների----------8
5. Արևուտ համայնքի 2025-2027թթ. կանխատեսվող ծախսերը----------
6. Բյուջետային ծախսերի կանխատեսումը ըստ ոլորտների----------10
7. Արևուտ համայնքի 2025-2027թթ. կանխատեսվող դեֆիցիտը----------

Ներածություն

Արևուտ համայնքի 2025-2027թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (այսուհետ՝ ՄԺԾԾ) հանդիսանում է Արևուտ համայնքի զարգացման և համայնքի միջնաժամկետ կտրվածքով գլխավոր ֆինանսական փաստաթուղթը, որը և հանդիսանում ելակետ՝ նախագծելու համապատասխան տարվան հաջորդող տարեկան բյուջեն:

ՄԺԾԾ-ով ներկայացվում է կանխատեսվող Արևուտ համայնքի հաջորդող 3 տարիների եկամուտները, դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները, ծախսային ուղղությունները ըստ ոլորտների, որոնք բերելու են Արևուտ համայնքի կայուն և համաչափ զարգացմանը, ինչպես նաև կընձեռնեն համայնքին առավել արդյունավետ գեներացնել եկամուտները, մասնավորապես միջնաժամկետ կտրվածքով կմշակվեն մեխանիզմներ դրանք ավելացնելու ուղղությամբ, որը իր հերթին կբերի համայնքի զարգացմանը միտված ծախսերի ավելացմանը:

ՄԺԾԾ-ն կնպաստի ավելի լայն և հեռանկարային ծախսերի քաղաքականության մշակմանը, որի շնորհիվ համայնքի զարգացման հեռանկարը կստանա բյուջետային ձևաչափ և որը ըստ էության հասանելի կդարձնի բոլորին՝ այդ թվում քաղաքացիներին, ուսումնասիրելու միջնաժամկետ կտրվածքով համայնքի կողմից նախատեսվող ծախսերի բաշխումը ըստ ոլորտների՝ թվային տեսքով, ընդ որում սույն ֆինանսական փաստաթղթով առավել կընդգծվի բյուջետային ծրագրերի շարունակականության ապահովման ֆինանսական մեխանիզմները:

Արևուտ համայնքի 2025-2027թթ.միջնաժամկետ ծախսային ծրագիրը կազմվել է օրենսդրության պահանջների համապատասխան

Զարգացման հիմնական ուղղությունները և սկզբունքները

Արևուտ համայնքի 2025-2027թթ. համար նախանշված ծրագրերի իրականացումը համաչափ և կայուն զարգացման սկզբունքի վրա, որի նպատակային իրագործման համար առաջնահերթ և գերակա են համարվելու՝

1. Կառավարման արդյունավետության բարձրացումը, բնակչությանը լիարժեք հաշվետու լինելը:
2. Հանրային տարածքների, շրջակա միջավայրի պաշտպանությունը:
3. Մարդու իրավունքների պաշտպանության գերակա սկզբունքներով որոշումների կայացումը:
4. Համայնքի կառավարման բարելավումը:
5. Իրավահավասար ու որպես ազգային փոքրամասնության համայնքի մշակույթի ձևավորումը:
6. Համայնքի բնակավայրերում ջրամատակարարման համակարգի վերակառուցման և ՕԿՋ-երի կառուցման աշխատանքներ:
7. Երիտասարդական և սպորտային ծրագրերի միջոցով բնակիչների շրջանում առողջ ապրելակերպի գաղափարի խթանումը:
8. Համայնքի բնակավայրերում մշակութային կյանքը աշխուժացնելու և մշակույթի տների վերանորոգում:
9. Փողոցային լուսավորության համակարգի արդիականացումը:
10. Աղբահանության բարելավում:
11. Հանգստի գոտիների ստեղծումը, ինչպես նաև փոքր խաղահրապարակների կառուցում:
12. Գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովումը, համայնքի և գործարար միջավայրի միջև փոխշահավետ համագործակցության խթանումը:
13. Նախակրթարանների կամ մանկապարտեզների հիմնում:
14. Բնակիչների սոցիալական պաշտպանվածության ապահովումն ու այդ նպատակով հաշմանդամություն ունեցող անձանց, ծնողազուրկ երեխաների, բազմազավակ և անապահով ընտանիքների կենսական ապահովմանն ուղղված սոցիալական ծրագրերի արդյունավետ իրականացումը:

Արևուտ համայնքի 2025-2027թթ. կանխատեսվող եկամուտները

Արևուտ համայնքի 2025-2027 թվականների եկամուտները կանխատեսվել են ՀՀ բյուջետային համակարգի մասի օրենքի դրույթներից,համայնքի սեփական եկամուտների և համահարթեցման տրվող դոտացիաներից:

ՀՀ Հարկային օրենսգրքի 233-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված դրույթների կիրառմամբ, որի արդյունքում միջնաժամկետ կտրվածքով սեփական եկամուտների կազմում հիմնական աճը նախատեսվում է հարկ անշարժ գույքի մասով եկամտատեսակից:Հավելված1

Եկամուտների վերծանումը ըստ առանձին տեսակների

Արևուտ համայնքի 2025-2027թթ. եկամուտների կազմում՝ սեփական եկամուտների ցուցանիշը համապատասխանաբար կազմում է 10985.3, 12900.0 13000.0 հազ. դրամ

2025-2027թթ. ՄԺԺԾ-ով սեփական եկամուտների կազմում էապես աճող եկամտատեսակներն են:

Արևուտ համայնքի 2025-2027թթ. կանխատեսվող ծախսերը

Արևուտ համայնքի 2025-2027թթ. ծախսերը կանխատեսվում են համապատասխանաբար՝ 83985.3, 91900.0 և 92000.0 հազ. դրամ և միտված են համայնքի համաչափ և կայուն զարգացմանը: Ծախսային մասը նախագծվել է հետևելով բյուջետային հաշվեկշռվածության սկզբունքին՝ ապահովելով բյուջեների կառուցման ստանդարտները և ներկայացնելով այն ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգումների, ինչպես նաև ըստ առանձին ծրագրերի:

Բյուջետային ծախսերի կանխատեսումը ըստ ոլորտների

Կանխատեսվող բյուջետային ծախսերի բաշխման ոլորտային սկզբունքը կայանում է Արևուտ համայնքի համաչափ զարգացման և ոլորտային ուսումնասիրությունների

արդյունքում հանգած խնդիրների լուծման տեսլականներով, և այն առավել մատչելի ձևով ներկայացված է բյուջետային դասակարգման գործառական խմբերում:

Արևուտ համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի խոշոր, նշանակալից և շարունակական ծախսային ծրագրերից են՝ բնակավայրերի ջրամատակարարման համակրագեր ՕԿՋ կառուցում, պետական աջակցությամբ և սուբվենցիայով խաղահրապարակներ կառուցում,համայնքային ճանապարհների բարելավում:Մշակութային տների վերանորոգում համայնքի և պետական սուբվենցիայի միջոցով:

Արևուտ համայնքի 2025-2027թթ. կանխատեսվող դեֆիցիտը

2025-2027թթ կանխատեսվող դեֆիցիտի կամ հավելուրդի ֆինանսավորման աղբյուրների կազմում արտացոլված են՝ տարեսկզբի ազատ մնացորդի վարչական մասից ֆոնդային մաս անցնող և հենց ֆոնդային մասում կանխատեսվող բյուջետային միջոցները:

Միեր Մարտիրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արևուտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Արևուտ, +37494979724, arevut10@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ԱՊՐԻԼԻ 2024թվականի N 9-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով.

ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Արևուտ համայնքի Հակո բնակավայրի 314-001-01 ծածկագրով հողերից 370 հա,Դդմասար բնակավայրի 101-001 ծածկագրով հողերից 170 հա,Կանչ բնակավայրի 101-001 ծածկագրով հողերից 150 հա,Սորիկ բնակավայրի 103-001 ծածկագրով 150 հա,Արևուտ բնակավայրի 132-001-101 ծածկագրով 100 հա,Թլիկ բնակավայրի 101-001 ծածկագրով հողերից 476 հա և106-001 ծածկագրով 235 հա արոտավայրերը տրամադրել վարձակալության մեկ տարի ժամկետով:

2.Արևուտ,Հակո,Կանչ, Սորիկ բնակավայրերում մեկ հեկտարի հաշվով վարձավճարի չափը սահմանել 1000/մեկ հազար/ ՀՀ դրամ,իսկ Թլիկ և Սորիկ բնակավայրերում մեկ հեկտարի հաշվով վարձավճարի չափը սահմանել 1300/մեկ հազար երեք հարյուր/ՀՀ դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼՈՅԱՆ ԹԵՆԳԻԶ

ԱԼՈՅԱՆ ՀԱՍԱՆ

ԲԱՔՈՅԱՆ ԶԱԴԱ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՕՍԵՅԱՆ ՏԻՏԱԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՕՍԵՅԱՆ